



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/140

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ֆորտունա 84» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված
02.05.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
27.04.2022թ. թիվ 26/26-1/7415-2022 գրությամբ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ին գնումների
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու
նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի
հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.04.2022թ. թիվ Ե/ՎՈւ/711-22 գրության

հիման վրա, 27.04.2022թ. թիվ 26/26-1/7415-2022 գրությամբ նախաձեռնել է «Ֆորտունա 84» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ֆորտունա 84» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«1. Գործի նախապատմությունը,

«Ֆորտունա 84» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) մասնակցել է Հայաստանի ազգային ազրարային համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված թիվ ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/49 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Աճուրդ) և ներկայացրել է հայտ:

Հայտը ստորագրել է Ընկերության ներկայացուցիչ Արմինե Մաթևոսյանը (հծհ 5712860716), ով այդ գործողությունները կատարելու համար եղել է պատշաճ լիազորված, մասնավորապես՝ Արմինե Մաթևոսյանի լիազորությունները փաստելու համար Ընկերությունը Պատվիրատուին ներկայացրել է Ընկերության կնիքով կնքված և Ընկերության տնօրեն՝ Արթուր Ռշտունու կողմից ձեռագիր ստորագրված լիազորագիր: Սակայն հաշվի չառնելով նշյալ հանգամանքը Պատվիրատուն՝ մերժել է Ընկերության հայտը պատճառաբանելով, որ լիազորագիրը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Արդյուքնում անհիմն սահմանափակվել է Ընկերության մասնակցությունը Աճուրդին:

2. Գործի փաստական հանգամանքները.

2.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված Աճուրդին և ներկայացրել է հայտ: Հայտը ստորագրել է Ընկերության ներկայացուցիչ Արմինե Մաթևոսյանը:

2.2 Ընկերությունը ի սկզբան է ներկայացված հայտում Արմինե Մաթևոսյանի լիազորությունները հաստատող լիազորագիրը չէր կցել: Ելնելով այդ հանգամանքից գնահատող հանձնաժողովը 18.04.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ նշել է, որ 07.04.2022թ.-ին հանձնաժողովն արձանագրեց, որ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրված են այլ անձի կողմից, ում նման լիազորություն վերապահված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

2.3. Աճուրդի գնահատող հանձնաժողովը լիազորագրի բացակայության վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում Պատվիրատուին է ներկայացրել Ընկերության կողմից 04.04.2022թ.-ին Արմինե Մաթևոսյանին տրված լիազորագրի (այսուհետ՝ Լիազորագիր) բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, որով Արմինե Մաթևոսյանը լիազորվել է էլեկտրոնային ստորագրել ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/49 ծածկագրով գնման ընթացակարգի համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Լիազորագիրը Ընկերության տնօրեն Արթուր Ռշտունու կողմից ստորագրվել է ձեռագիր և կնքվել է Ընկերության կնիքով:

2.4. 18.04.2022թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստում Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը այն պատճառաբանությամբ, որ Լիազորագիրը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

3. Դիրքորոշման հիմքերն ու հիմնավորումները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները

հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, (...), կիրառվում են (...), 1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի «Սահմանադրական դատարանի ակտերը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նույն օրենքի «Որոշման կամ եզրակացության շարադրանքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-722 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, (...):

(...): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև:»:

Վերոգրյալից հետևում է, եթե օրենքով պահանջվում է ստորագրել որևէ փաստաթուղթ և պարտադիր չէ նոտարական կարգով ստորագրության վավերականության հաստատում, ապա այդ փաստաթուղթը կարող է ստորագրվել թե՛ ձեռագիր, թե՛ էլեկտրոնային թվային եղանակով, ընդ որում, երկու դեպքում էլ այդ փաստաթուղթը ունենալու է նույն իրավաբանական ուժը, հետևաբար անկախ ստորագրության ձևից այն ենթակա է ՀՀ տարածքում բոլորի կողմից ընդունման, որպես պատշաճ ստորագրված՝ ստորագրող անձի կողմից հաստատված (վավերացված) փաստաթուղթ: Ուստի, եթե գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից հայտով ներկայացված լիազորագիրը ստորագրված է ձեռագիր, ապա հայտը ենթակա չէ մերժման՝ լիազորագիրը էլեկտրոնային թվային ստորագրված չլինելու պատճառաբանությամբ, քանի որ ինչպես նշված է ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-722 որոշմամբ՝ բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև: Ուստի, նշյալից կարող ենք փաստել, որ գնման ընթացակարգի շրջանակներում լիազորագիրը ձեռագիր ստորագրելով մասնակիցը բովանդակային առումով կատարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջները, հետևաբար եթե մասնակցի կողմից ներկայացված լիազորագիրը ստորագրված է ձեռագիր, ապա այն պետք է դիտվի որպես հրավերի պահանջներին բավարարող:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից՝ Ընկերության կողմից Արմինե Մաթևոսյանին 04.04.2022թ.-ին տրված Լիազորագիրը Ընկերության տնօրեն Արթուր Ռշտունին ստորագրել է ձեռագիր և հաստատել է Ընկերության կնիքով: Նշված փաստը դիտելով՝ ՀՀ

Սահմանադրական դատարանի դիրքորոշման և վերոնշյալ իրավական ակտերի նորմերի լույսի ներքո, կարող ենք եզրահանգել, որ Ընկերության տնօրենը ձեռագիր ստորագրելով Լիազորագիրը բովանդակային առումով կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջները, որպիսի հանգամանքներում Ընկերության հայտը ենթակա չէր մերժման՝ Լիազորագիրը էլեկտրոնային թվային ստորագրված չլինելու պատճառաբանությամբ: Ուստի ելնելով, նշյալից հայտնում ենք, որ Ընկերությունը գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն չի խախտել և վերջինիս հայտը ենթակա չէր մերժման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են: Հետևաբար, խնդրում ենք Ընկերությանը չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված խախտումը:

Պահանջը՝

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ֆորտունա 84» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՅ-ՆԳ-2022/140 ծածկագրով ընթացակարգը»:

«Ֆորտունա 84» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՅ-ՆԳ-2022/140 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:03-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.04.2022թ. թիվ Ե/ՎՈւ/711-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ-ի ապրիլի 5-18-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի է ունեցել բժշկական պարագաների ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/49 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01306378, հասցե՝ ՀՀ, Մարգարյան 29, բն. 15, հեռ.՝ +37491-----; էլ. փոստի հասցե՝ fortuna8484@yandex.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրված են այլ անձի կողմից, ում նման լիազորություն վերապահված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 07.04.2022թ-ին eAuction համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և <https://eauction.armeps.am> համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ի կողմից 18.04.2022թ-ի դրությամբ և <https://eauction.armeps.am> համակարգի միջոցով ներկայացվել է լիազորագիր, որը սակայն հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ՖՈՐՏՈՒՆԱ 84» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/140 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:03-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆորտունա 84» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 07.04.2022թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրված են այլ անձի կողմից, ում նման լիազորություն վերապահված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 18.04.2022թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով ներկայացվել է լիազորագիր, որը սակայն՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2022թ. թիվ 26/26-1/7415-2022

գրությունը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի 20.04.2022թ. թիվ Ե/ՎՈւ/711-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով,

բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊԶԲ-22/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆորտունա 84» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 07.04.2022թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ստորագրված են այլ անձի կողմից, ում նման լիազորություն վերապահված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2022թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով ներկայացվել է լիազորագիր, որը սակայն՝ հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընկերության կողմից Արմինե Մաթևոսյանին 04.04.2022թ.-ին տրված լիազորագիրը Ընկերության տնօրեն Արթուր Ռշտունին ստորագրել է ձեռագիր և հաստատել է Ընկերության կնիքով:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նույն օրենքի «Որոշման կամ եզրակացության շարադրանքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-722 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, (...):

(...): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, **ապա որևէ փարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով**

սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև»:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների և իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում գտնում եմ, որ նման պայմաններում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառումը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.04.2022թ. թիվ 26/26-1/7415-2022 գրությամբ «Ֆորտունա 84» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ